12. ՂՈՒԼ-ԶԱԴԱ ԵՎ ՆՈՒՌԻ-ԳՅՈՂԱԼԻ

Ժամանակոց կէղնի, չի էղնի մե թագավորմ կէղնի։ Էդ թագավորը մենձ կարողութեն կունենա, հրմը մեննակ մե տղեմ կունենա։ Էդ տղեն կէղնի տասնըհինգ, տասնըվեց տարեկան։ Անունն էլ Ղուլ-ղադա կէղնի։

Տղեն գելնի մե լավ ձիմ կը հեծնի, հընկեր տղոց հետ կէրթա մեշեքը ավճութեն կէնե, իրիկունը դառնա գուքա կը տուն։

Օրվանըմ մեկն էլ հընկեր տղեքը բիտտուն տեղ կէրթան, ինքը կը մնա մեննակ։ Կը հեծնի ձին, կառնե ղիլֆիղար թուրը, կէրթա ֆորսի։ Էս կողմը կը ղարկըվի, էն կողմը կը զարկըվի տեյմոր ցորեկ հեչ բանըմ ձեռքը չի ընկնի։ Հերսը գելնի դառնա կը գուքա կը տուն։

Ճամփեն կը տեսնի օր քաղքի տղեքը պղի[1] վրա հոլ կը խաղան։ Ինքն էլ գիշնի էդոնց հետ հոլ կը խաղա։ Խաղցած վախտը մե պառավմ ջուր կը տանի էղե, գուքա էսոնց քովը, կուժը վար կը դնե, սեյր կէնե։ Մեկ էլ թագավորի տղեն հոլը թապլելու պես հոլը կէրթա կը դիպնի էդ խեղճ պառվի կժին ու կուժը կը ջարդե։

Պառավը գուլա, կանիծե էդ տղին, կըսե.— Նուռի-Գյողալի սեբը սիրտդ ընկնի վառիս ու էրիս։

Էդ խոսքը ըսելու պես՝ գիտես թե կրակմ ընկավ էդ տղի սիրտն

---

[1] Սառույց (Ծ. Բ.)։

ու սկսեց վառել։ Տղեն թողեց հոլն ու ընկերտանցը, հեծավ ձին, էկավ տուն։

Հ'եքսի օրը հ'ելավ ինքն իրան ըսավ. «Ես պըտի էրթամ հ'աշխարքե հ'աշխարք ման գամ, էգ Նուռի-Գյողալին գտնիմ»։

Տղեն հ'ելավ կապեց զիլֆիղար թուրը, հեծավ ձին, մե խուրջինմ էլ օսկի առավ, ընկավ ճամփա՝ գնաց։ Սարե սար, ձորե ձոր, չոլե չոլ անցավ, տեղ չմնաց օր ոտքի տակ չըտար։ Գնաց մե մենձ մեշիմ մեշ նստավ հաց կուտեր, տեսավ օր մե ջեյրանըմ դեմը կայնած է։ Ջեյրանը տեսնելու պես, գիտես թե սիրտը ճեղքեցին, ջեյրանը մեշը դրին։ Հաց բան թողեց ու ձին հեծավ, ընկավ էդ ջեյրանի հ'ետևեն։ Ջեյրանը գնաց, ինքը հ'ետևեն, ջեյրանը գնաց, ինքը հ'ետևեն, օխտը սար, օխտը ձոր անցան՝ մեկ էլ մե գյուղ տեղմ ջեյրանը գնաց մե քյոշկ ու սարայի մեշ մտավ, ղատղն անցավ։

Տղեն գնաց քյոշկ ու սարայի քովը կայնավ, տեսավ օր ո՛չ գուռ ունի, ոչ հ'երթիկ։ Քաշեց հարուր լըտրանոց զիլֆիղար թուրը՝ քյոշկ ու սարայեն զարկելուն պես մե կողքը կիսեց, թափեց։ Նես մտավ տեսավ օր հեչ բան չի էրևա, մե տեղմ է քցած, մե մենձ նուռմ էլ կողքը դրած։ Վերուց նուռը ճեղքեց, տեսավ օր մե լսի կտոր աղջիկմ մեշը քնած է։ Աղջկա թուշը պաքելուն պես՝ աղջիկը վեր թռավ։

— Ցա՜,— ըսավ,— Ղուլ-զագա չան, էկե՞ր ես։

— Հա՜,— ըսավ,— էկեր եմ,— ըսավ, ու փաթթըվավ աղջկան։

Վախտմ անցավ, տղեն սկսեց աղջկան հարց ու փորձ էնել գըլխու էկածը։

Աղջիկն ըսավ,— Ես մե հարուստ բազրկյանի աղջիկ էի, մեր քաղաքի թագավորը իրան տղին գուզեր ընձի, հերս էլ չէր տա։ Ինչըզ էղավ, ինչըզ չէղավ, էս հ'իրեք գլխանի ղովտը էկավ, ընձի փախուց բերեց իստեղ։

Տղեն կըսե.— Հ'ըպը հ'ո՞ւր է էդ ղովտը։

Կըսե.— Էդ ղովտը գնացեր է էդ դեմի սարի տակը կռիվ կէնե։ Էնտեղ իրեք դև կան, գուզեն օր գան ինձի ձեռքեն խլեն, տանին, չեն կրնա։

Տղեն կըսե.— Էդ ի՞նչըզ բան է, օր հ'իրեք դևը չեն կրնա էդ ղովտին հաղթե։

Աղջիկը կըսե.— Քա՛, ինչ կըսես, հ'իրեք գլխանի ղովտ է, ինչքան օր գլխները կը կտրեն, էլի կը սաղնա, չունքի օր էդոր հոգին իրեք հատ ճնճըղուկ է, մե ղութկիմ մեշ դրած այտի վերը թարքի վրա պահել է։ Տեյմոր էդ ճնճըղուկների գլոխը չկտրեն, էդ ղովտը չի մեռնի։

Տղեն կըսե.— Նուռի-Գյոզալ ջան, դու ի՞նչ գիտես։

Աղջիկը կըսե.— Ես դյաքութենով իմացեր եմ։

— Օր էդպես է, կեցի,— կըսե.— Ես էդոր ղութիկը վար առնիմ, էրթամ էդ ղովտի էլ, էն դևերու էլ գլոխը կտրեմ, գամ քեզի առնիմ էրթամ։

Վար կառնե էդ ղութիկը, դնե կը ծոցը, ձին կը հեծնի, կէրթա էդ ղովտի ու դևերի քովը։ Տեսնի կօր, աղչկա ըսածի պես, հ՚իրեք դև մե ղովտիմ հետ էնպես կռիվ կէնեն, օր սար ու ձոր կը թնդա։ Տղեն ինքն իրան կըսե. «Ի՞նչ էնեմ, թե օր հ՚իրեք դևի կողմն անցնիմ, պըտի ըսեն վախեցավ, թե ղովտի կողմն անցնիմ, պըտի ըսեն լոպ-պըսցավ[1] լավն էն է էրթամ բարև տամ, վով օր թեզ բարևա առավ, էնոր կողմն անցնիմ»։

Գնաց, բարև տվեց, ղովտը էն սրհաթին բարևն առավ։ Անցավ էդ տղեն ղովտի կողմը, ըսավ.

— Դու քիչմ հանգստացի, ես հ՚ելնիմ կռվիմ էդոնց հետ։ Ղով-տը նստավ, տղեն քաշեց թուրը, հ՚ընկավ էդ դևերի մեջ, հ՚իրեքի էլ գլխները կտրեց, հ՚ելավ էկավ ղովտի կուշտը։

Ղովտը մնաց զարմացած։ Մտքի մեջը ըսավ. «էս տղեն հ՚եգուց մեկել օր դիմանա օր ես Նուռի-Գյոզալին փախուցեր եմ, գելնի իմ դեմս կը կռվի, լավն էն է՝ հիմիկուց վերջացընեմ»։

Տղա,— կըսե,— ել, կռիվս կռիվ է։

Տղի ուզածն էլ էդ էր, մահանիմ կաշեր։ Գելնի տղեն, ախպեր ջան, էս կողմը կը զարկեն, էն կողմը կը զարկեն, մեկ էլ տղեն սամ-թի կը բերի հարուր լըտրանոց թուրն օր գլխուն չի տա, հ՚իրեք գլոխն էլ մեկեն կը թռնին։

— Այ հա՞յ,— կըսե ղովտը,— իսան օղլի, մեկ էլ զարկ։

Տղեն կըսե.— Մորես մեկ եմ էղե, մեկ կը զարկեմ։

Ու ծոցեն կը հանե ղութիկը, բանա էդ հ՚իրեք ճնճղուկի ճտերն էլ կը թոցընե, օր չէզնի թե ղովտը հ՚ետև կենա սաղնա։ Հ՚ետև ձին կը հեծնի, ուրախ, ուրախ կը քշե, դուքա Նուռի-Գյոզալի քովը։

— Նուռի-Գյոզալ ջան,— կըսե,— ղովտին էլ, հ՚իրեք դևերին էլ սրպանեցի, ե՛լ էրթանք։

Գելլին գընկնին ճամփա, կէրթան։ Կէրթան, շատն ու քիչը աստ-ված գիտե, մեկ էլ տղեն կը տեսնի օր օխտը ճամփու վրա հ՚իրեք ղովտ կայներ են, էրթըցող գալոզին կայնեցընեն, թալնեն կը։

Տղին օր կը տեսնին, ղովտի մեկը մեկելին կըսե.

---

[1] Հպարտացավ (Ս. Բ.)։

— Ա՜յ թալնելու բան, լսի կտոր աղջիկը հետը։ Քելեք էրթանք, բռնենք, բերենք։

Տղեն տեսնի կ'օր ղովտերը դեպի իրան դուքան, ինքը առանց վախենալու, ձին կը քշե դեպի ղովտերուն, թուրը կը քաշե ու տուր թե կուտաս։ Էդ հ'իրեք ղովտին էլ էդտեղ կը սատկեցընե, ճամփորդներին էլ կաղատե, ասսու անունը կուտա ու դըյնի ճամփա, կէրթա։

Կէրթա, կէրթա կը հասնի իրան հոր քաղաքը։ Քանի տարի էր կորել էր, հեչ մարդ խապար չէր, թե հ'ո՞ւր էր դնացե։ Խապարը կէրթա հորը՝ թե տղեդ էկեր է։ Հերը կէրթա տղին էլ, հարսին էլ կառնի դուքա տուն։

Օխտն օր, օխտը գիշեր հարսնիք կէնե, էդոնց կը պսակե։

Էնոնք կը հասնին իրանց մուրադին, դուք էլ հասնիք ձեր մուրադին։

Հ'երկնքեն հ'իրեք խնձոր գընկնի, մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ալամ աշխըրքին։